ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2017թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության մասին 4

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն 15

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումները 20

Գլուխ 3.1 Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծություն 37

Գլուխ 4. Հանձնաժողովի գործունեության ֆինանսական հաշվետվություն 40

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթներին համապատասխան:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղվել է «Հանձնաժողովի 2016 թվականի տարեկան գործունեության ծրագրի» կատարմանը, Օրենքով ամրագրված գործառույթների իրականացմանը և միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարմանը:

Առկա հիմնախնդիրների լուծման նպատակով Հանձնաժողովը 2016 թվականին շարունակել է աշխատանքները հետևյալ հիմնական ուղղություններով.

ա) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում,

բ) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերի քննարկում և համապատասխան որոշումների ընդունում,

գ) Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների վերաբերյալ դատական գործերի քննությանը մասնակցություն,

դ) Օրենքում փոփոխությունների և լրացումների կատարում, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից ենթաօրենսդրական ակտերի (կարգերի) ընդունում և կատարելագործում,

ե) ապրանքային շուկաներում դիտանցումների, վերլուծությունների և ուսումնասիրությունների միջոցով Օրենքի հնարավոր խախտումների բացահայտում, կանխում և արգելում,

զ) ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով մրցակցության խրախուսմանը նպաստում,

է) պետական մարմինների, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն,

ը) Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության ապահովում, հասարակության իրազեկում:

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ

Հանձնաժողովը տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական քաղաքականություն իրականացնող անկախ մարմին է: Հանձնաժողովի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը եւ սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Վերջին մի քանի տարիների ընթացքում Հանձնաժողովն իրականացրել է բազմաթիվ ուսումնասիրություններ, գործարար համայնքի և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ՝ նպատակ ունենալով բացահայտել մեր երկրում մրցակցության ոլորտին առնչվող խնդիրները: Հանձնաժողովի գնահատմամբ հասարակության շրջանում մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող ընկերությունները հաճախ նույնացվում են, ինչի արդյունքում թյուր տպավորություն է ձևավորվում հանրապետությունում առկա մենաշնորհների քանակի և ծավալի վերաբերյալ: Օրենքի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկաներում համարվում է մենաշնորհ դիրք ունեցող, եթե այդ ապրանքային շուկայում չունի մրցակից: Մնացած բոլոր դեպքերում, երբ ապրանքային շուկաներում գործում են մեկից ավելի ընկերություններ, որոնց իրացման ծավալները գերազանցում են Օրենքով սահմանված շեմերը, այդ ընկերությունները համարվում են գերիշխող դիրք ունեցող: Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ-ում մենաշնորհային ոլորտները (շուկաները) հիմնականում կապված են բնական մենաշնորհների և պետության կողմից կոնցեսիոն կառավարմանը հանձնված ոլորտների հետ: Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների համաձայն բազմաթիվ ապրանքային շուկաներում (պանրի, հացի, պահածոների, բնական հյութերի, թեյի, երշիկեղենի, մակարոնի, կենդանի ձկան, սառեցված ձկան, ոսպի, հնդկաձավարի, ձավարի, բրինձի, խոզի, հավի, տավարի մսի, օղու, գինու) կենտրոնացվածության մակարդակը ցածր է և գերիշխող դիրք ունեցող ընկերություններ առկա չեն: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ թեև Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված մի շարք ապրանքային շուկաներում (գազավորված ըմպելիքների, կաթնամթերքի, հանքային ջրի, աղբյուրի ջրի, շոկոլադե ապրանքների, դեղերի, սուրճի, կոնյակի, գարեջրի) գործել են խոշոր (գերիշխող դիրք ունեցող) ընկերություններ,

այդուհանդերձ այդ ապրանքային շուկաներում առկա են տասնյակ փոքր և միջին ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, որի արդյունքում կարող ենք փաստել, որ այդ ապրանքային շուկաներում առկա է ձևավորված մրցակցային միջավայր: Հետևաբար անհրաժեշտ է փաստել, որ խոշոր ընկերությունների առկայությունը դեռևս չի նշանակում, որ այդ շուկաներում մրցակցությունը սահմանափակ է: Միաժամանակ, քանի որ խոշոր ընկերություններն ունեն մրցակցային առավելություն մյուս ընկերությունների նկատմամբ, և առկա է որոշակի ռիսկ, որ, նրանք, օգտվելով իրենց մրցակցային առավելությունից, կարող են դա չարաշահել՝ մուտքի խոչընդոտներ ստեղծելով մյուս ընկերությունների համար: Այդ իսկ պատճառով ամբողջ աշխարհում ընդունված է, որ մրցակցության պաշտպանությամբ զբաղվող մարմինները հետևում են, որպեսզի խոշոր ընկերությունները չարաշահումներ չիրականացնեն: Այդ առումով Հանձնաժողովը մշտապես հետևում է բարձր կենտրոնացվածություն ունեցող ապրանքային շուկաներում գործող ընկերությունների գործունեությանը, որպեսզի թույլ չտա նրանց կողմից չարաշահումների իրականացումը:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ հասարակության շրջանում հաճախ առկա է թյուր տպավորություն Հանձնաժողովի գործառույթների վերաբերյալ: Մասնավորապես՝ Հանձնաժողովի գործունեությունը կապվում է երկրում տարբեր ապրանքների և ծառայությունների գների կարգավորման հետ, որը գտնվում է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից դուրս: Գործող օրենսդրությամբ Հանձնաժողովը գների կարգավորման գործառույթներ չունի: Ապրանքների և ծառայությունների գների վերահսկման նկատմամբ Հանձնաժողովի իրավասությունները վերաբերում են բացառապես այն շուկաներին, որտեղ առկա են գերիշխող դիրք ունեցող ընկերություններ և հակամրցակցային համաձայնությունների դրսևորումներ: Ընդ որում, այս դեպքում ևս գերիշխող դիրք ունեցող ընկերություններն իրենք են սահմանում և փոփոխում ապրանքների և ծառայությունների իրացման գներ, իսկ Հանձնաժողովի լիազորությունները վերաբերում են միայն այն դեպքերին, երբ գնային փոփոխությունները պայմանավորված չեն շուկայական տնտեսությանը բնորոշ տնտեսական մեխանիզմներով:

Տարբեր երկրներում տնտեսական մրցակցության քաղաքականությամբ և մրցակցության պաշտպանությամբ զբաղվող պետական մարմնի կողմից իրականացվող գործունեության արդյունավետության և շուկաներում մրցակցային միջավայրի բարելավման վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություններ է իրականացնում

«Համաշխարհային տնտեսական ֆորում» միջազգային կազմակերպությունը: Կազմակերպության կողմից կատարվող ուսումնասիրությունները ներկայացվում են ամենամյա զեկույցների ձևով, որոնց շարքին է դասվում նաև Համաշխարհային մրցունակության զեկույցը: Նշված զեկույցում հաշվարկվում են 140 երկրների տնտեսական և հասարակական կյանքին վերաբերող բազմաթիվ ցուցանիշներ, որոնցից երեքը վերաբերում են երկրների տնտեսական մրցակցության միջավայրին և մրցակցային քաղաքականության արդյունավետությանը: Նշենք նաև, որ զեկույցը կազմվում է յուրաքանչյուր երկրում գործող տնտեսվարող սուբյեկտների շրջանում իրականացվող փակ և գաղտնի հարցումների արդյունքներով: Ընդհանուր առմամբ Հայաստանի վերաբերյալ նշված երեք ցուցանիշների գծով 2010 թվականից ի վեր արձանագրվել է զգալի առաջընթաց: Մասնավորապես հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշով Հայաստանը 2016 թվականին զբաղեցրել է 77-րդ հորիզոնականը՝ 2010 թվականին 138-րդ հորիզոնականի փոխարեն. առաջընթացը կազմում է 61 կետ (տես՝ Գծանկար N 1):

Գծանկար N 1

Հայաստանում և մի շարք երկրներում հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշի դինամիկան 2010-2016 թվականների ընթացքում



Մրցակցության վրա ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների ազդեցության ցուցանիշով 2016 թվականին Հայաստանը զբաղեցրել է 51-րդ հորիզոնականը՝ 2010 թվականի 133-րդ հորիզոնականի փոխարեն. առաջընթացը կազմում է 82 կետ (տես՝ Գծանկար N 2):

Գծանկար N 2

Հայաստանում և մի շարք երկրներում մրցակցության վրա ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների ազդեցության ցուցանիշի դինամիկան 2010-2016 թվականների ընթացքում



Դիտարկվող հաջորդ ցուցանիշը ներքին շուկայում մրցակցության ուժգնությունն է, որի գծով 2016 թվականին զբաղեցրել ենք 91-րդ հորիզոնականը՝ 2010 թվականին 136-րդ հորիզոնականի փոխարեն. առաջընթացը կազմում է 45 կետ (տես՝ Գծանկար N 3):

Գծանկար N 3

Հայաստանում և մի շարք երկրներում ներքին շուկայում մրցակցության ուժգնության ցուցանիշի դինամիկան 2010-2016 թվականների ընթացքում



Միաժամանակ նշենք, որ ներկայացված ցուցանիշները միջազգային համեմատությունների տեսանկյունից Հայաստանի համար ապահովում են շատ ավելի նպաստավոր դիրք, քան ունեն տարածաշրջանային և ԱՊՀ անդամ որոշ երկրներ (տես՝ Հավելվածը):

Հանձնաժողովը որպես կանոն իրականացնում է ուսումնասիրություններ տնտեսվարող սուբյեկտներից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից, պետական մարմիններից և այլ անձանցից ստացված դիմումների հիման վրա, կամ էլ սեփական նախաձեռնությամբ:

2016 թվականի ընթացքում Հանձնաժողովն իրականացրել է շուրջ 166 ուսումնասիրություն (այդ թվում՝ 2016 թվականին դեռևս չավարտված), որոնք առավելապես վերաբերել են համակենտրոնացման գործարքներին, հնարավոր անբարեխիղճ մրցակցության դրսևորումներին, հակամրցակցային համաձայնություններին, անհավասար մրցակցային պայմաններին, մենաշնորհ և գերիշխող դիրքի չարաշահումներին: Նշված ուսումնասիրությունները Հանձնաժողովն իրականացրել է տնտեսվարող սուբյեկտներից, քաղաքացիներից, պետական մարմիններից, հասարակական կազմակերպություններից ստացված դիմումների, մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա, ինչպես նաև իր նախաձեռնությամբ: Ընդ որում, իրականացված ուսումնասիրությունների կառուցվածքում առավել մեծ են եղել Հանձնաժողովի նախաձեռնությամբ իրականացված, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներից ու քաղաքացիներից ստացված դիմումների հիման վրա կատարված ուսումնասիրությունների մասնաբաժինները (տես՝ Գծանկար N 4):

Գծանկար N 4

Հանձնաժողովի կողմից 2016 թվականին իրականացված ուսումնասիրությունների քանակը՝ ըստ տեղեկատվության ստացման աղբյուրների



Կատարված ուսումնասիրությունները թեև վերաբերել են տնտեսության տարբեր ոլորտներին՝ ծառայություններ, առևտուր, պարենային և ոչ պարենային ապրանքներ, էներգետիկա, շինարարություն, պետական գնումներ, այդուհանդերձ ուսումնասիրությունների կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին են ունեցել առևտրի և ծառայությունների, պարենային և ոչ պարենային ապրանքների ոլորտում կատարված ուսումնասիրությունները (տես՝ Գծանկար N 5):

Նկատենք նաև, որ պետական գնումների ոլորտում կատարված ուսումնասիրություններն ընդգրկել են բժշկական, սոցիալական, կրթական և այլ ոլորտներում գործող տասնյակ պետական մարմինների, համայնքների և գնում իրականացնող պետական այլ մարմինների կողմից կազմակերպված մրցույթները, այդ թվում՝ ուսումնասիրվել են թվով 30 բժշկական հաստատությունների, 27 սոցիալական հաստատությունների, 30 համայնքների, 16 բուհական հաստատությունների մրցութային գործընթացները:

Գծանկար N 5

Հանձնաժողովի կողմից 2016 թվականին իրականացված ուսումնասիրությունների քանակը՝ ըստ ոլորտների



Հանձնաժողովի կողմից 2016 թվականին կատարած ուսումնասիրությունների շարքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման և կնքվող համակենտրոնացման գործարքների վերաբերյալ իրականացվող ուսումնասիրությունները՝ համապատասխանաբար 42 և 28 տոկոս մասնաբաժիններով: Ինչ վերաբերում է գերիշխող դիրքի չարաշահումների և հակամրցակցային համաձայնությունների բացահայտումներին, ինչպես նաև ապրանքային շուկաների ուսումնասիրություններին, ապա դրանց մասնաբաժինը համապատասխանաբար կազմել է 16, 6 և 8 տոկոս: Ընդ որում, ապրանքային շուկաների ուսումնասիրությունների շրջանակներում Հանձնաժողովը դիտարկել է շուկայի կառուցվածքը, նոր ընկերությունների կողմից շուկա մուտք գործելու, գործող ընկերությունների կողմից արտադրության, ներմուծման և իրացման ընդլայնման հնարավոր խոչընդոտները, շուկայում գործող ընկերությունների շահութաբերության մակարդակները, շուկայի ընդլայնման հնարավորությունները և այլն (տես՝ Գծանկար N 6):

Գծանկար N 6

Հանձնաժողովի կողմից 2016 թվականին իրականացված ուսումնասիրությունների կառուցվածքը ըստ Հանձնաժողովի գործառույթների



Միաժամանակ կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շուրջ 31 տոկոսի դեպքում խախտվել են մրցակցության օրենսդրության դրույթները, որից 29 տոկոսի նկատմամբ Հանձնաժողովի կողմից կիրառված պատասխանատվության միջոցը եղել է նախազգուշացման տեսքով, իսկ 2 տոկոսի նկատմամբ կիրառվել է տուգանք: Բացի այդ, ուսումնասիրությունների 35 տոկոսի պարագայում մրցակցության օրենսդրության խախտման դեպքեր չեն բացահայտվել, իսկ ուսումնասիրությունների 7 տոկոսը դեռևս չի ավարտվել (տես՝ Գծանկար N 7):

Գծանկար N 7

Հանձնաժողովի կողմից 2016 թվականին իրականացված ուսումնասիրությունների կառուցվածքը ըստ դրանց արդյունքում ընդունված որոշումների



Հանձնաժողովը, հասարակական հետարքրքրություն ներկայացնող բոլոր ուսումնասիրությունների արդյունքները տարվա ընթացքում մշտապես ներկայացրել է հանրությանը՝ դրանով իսկ ապահովելով թափանցիկության և հաշվետվողականության բարձր մակարդակ:

Միաժամանակ, Հանձնաժողովի աշխատանքների օպերատիվության և արդյունավետության բարձրացմանը մեծապես նպաստել է գործող թեժ գիծը, որի միջոցով քաղաքացիները մշտապես ներկայացնում են մրցակցային իրավախախտումների մասին տեղեկություններ, ինչը Հանձնաժողովին հնարավորություն է տալիս առանց լրացուցիչ ռեսուրսներ ծախսելու տեղեկանալ առկա խնդիրներին և համապատասխան քայլեր իրականացնել՝ դրանց լուծման ուղղությամբ:

Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում արդյունավետ համագործակցություն է ծավալել ՀՀ-ում գործող միջազգային և դոնոր կազմակերպությունների, մրցակցության պաշտպանությամբ զբաղվող օտարերկրյա կառույցների հետ: Հանձնաժողովի գործունեության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում միջազգային պայմանագրերով սահմանված՝ տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարումը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ակտիվ մասնակցություն է

ունեցել ԵԱՏՄ և ԱՊՀ անդամակցության շրջանակներում մրցակցային մարմինների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից իրականացվող համատեղ ուսումնասիրություններին (հեռահաղորդակցության, ավիացիայի, շինարարության և այլ ոլորտներ) իրականացմանը: Այս առումով հատկապես կարևորվում է ԱՊՀ և ԵԱՏՄ անդամ մյուս երկրներ հայկական ապրանքների արտահանման խոչընդոտների վերացման ուղղությամբ կատարվող աշխատանքները: Հանձնաժողովը 2016 թվականին ինչպես ԱՊՀ, այնպես էլ ԵԱՏՄ մակարդակներում կատարել է համատեղ աշխատանքներ գործընկեր երկրների մրցակցային մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ արտահանման շուկաներում մուտքի խոչընդոտների բացահայտման և վերացման նպատակով:

Նշենք նաև, որ 2016 թվականի ապրիլի 13-ից 15-ը Երևան քաղաքում կայացած ԱՊՀ անդամ-պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի հերթական 44-րդ նիստի ընթացքում երկու տարի ժամկետով Խորհրդի նախագահ է ընտրվել Հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանը: Նշվածը հաշվի առնելով՝ միջազգային համագործակցության ուղղությամբ 2017 թվականին ևս Հանձնաժողովը նախատեսում է շարունակել համագործակցությունը՝ փոխադարձ հետարքրքրություն ներկայացնող ոլորտներում համատեղ ուսումնասիրությունների իրականացման, ինչպես նաև մրցակցային օրենսդրության իրավապայմանագրային բազայի կատարելագործման նպատակով:

Միջազգային համագործակցության ուղղությամբ 2016 թվականին Հանձնաժողովը շարունակել է համագործակցությունը՝ փոխադարձ հետարքրքրություն ներկայացնող ոլորտներում տեղեկատվության փոխանակման, վերապատրաստման դասընթացների կազմակերպման, փորձի փոխանակման, ինչպես նաև մրցակցային օրենսդրության կատարելագործման նպատակով: Մասնավորապես՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ/OECD) Բուդապեշտում մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնագիտական գիտելիքներն ու աշխատանքային ունակությունները կատարելագործելու նպատակով 2016 թվականի ընթացքում մասնակցել են մրցակցության հարցերով սեմինարների ու աշխատաժողովների: Հանձնաժողովի աշխատակիցները վերապատրաստվել են համակենտրոնացումների վերահսկման, ֆինանսական ոլորտում մրցակցային խնդիրների բացահայտման, ուղղահայաց և հորիզոնական սահմանափակումների ու գերիշխող դիրքի չարաշահման,

տեղեկատվության փոխանակման թեմաների շուրջ:

Հանձնաժողովի կողմից կատարվող փոխգործակցության շրջանակներում առանձնակի կարևորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ) հետ համագործակցությունը, որի շրջանակներում Հանձնաժողովի կողմից կատարվել են համատեղ ուսումնասիրություններ սոցիալական նշանակության մի շարք շուկաներում: Հանձնաժողովները համատեղ աշխատանքներ են իրականացրել մրցակցության օրենսդրության չարաշահումների դեպքերի հայտնաբերման, դրանց դադարեցման և հետագայում բացառման ուղղությամբ:

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն

Նպատակ ունենալով ՀՀ-ում ձևավորել արդյունավետ մրցակցային միջավայր՝ Հանձնաժողովը պարբերաբար իրականացնում է առանձին ապրանքային շուկաների ուսումնասիրություններ, որոնց միջոցով նաև հսկողություն է սահմանում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների պահպանման նկատմամբ: Հանձնաժողովի կողմից կատարվող ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս վերհանել դրանցում առկա մրցակցային խնդիրները և տալ գործուն լուծումներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բենզինի շուկայի կենտրոնացվածությունը բարձր է և շուկայում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ՝ Հանձնաժողովը 2016 թվականի ընթացքում ևս ուշադրության կենտրոնում է պահել բենզինի շուկան և իրականացրել համապատասխան ուսումնասիրություններ: Մասնավորապես, կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2016 թվականին ևս բենզինի շուկայում գործել են գերիշխող դիրք ունեցող «ՍիՓիԷս օյլ քորփորեյշն», «Ֆլեշ» և «Մաքս Պետրոլ» ընկերությունները, որոնց մասնաբաժինը ներմուծման կառուցվածքում կազմել է համապատասխանաբար 60, 34 և 6 տոկոս (տես՝ Գծանկար N 8):

Գծանկար N 8

Բենզինի ներմուծման կառուցվածքը 2016 թվականին՝ ըստ ներմուծող ընկերությունների



Միաժամանակ կատարված ուսումնասիրության համաձայն 2016 թվականի սեպտեմբեր ամսվանից սկսած հայաստանյան շուկայում արձանագրվել է գների նվազում,

ինչի արդյունքում սեպտեմբեր ամսվա համեմատ բենզինի մանրածախ գները մինչև 2017 թվականի հունվար ամիսն աստիճանաբար նվազել են շուրջ 50 դրամով՝ կազմելով 330 դրամ: Այնուհետև 2017 թվականի հունվար ամսվա վերջին բենզինի մանրածախ գները սկսել են բարձրանալ՝ մարտ ամսին կազմելով 370 դրամ: Վերը նշվածի կապակցությամբ Հանձնաժողովի կողմից դիտարկվել են բենզին ներմուծող ընկերությունների ձեռքբերման գները, առկա պաշարների մնացորդային արժեքները, բենզինի միջազգային գները և այլ ցուցանիշները, որի արդյունքում պարզվել է, որ տեղի ունեցած գնային փոփոխությունները պայմանավորված են եղել բենզինի ձեռքբերման գների փոփոխություններով: Մասնավորապես ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2017 թվականի հունվար ամսին՝ 2016 թվականի սեպտեմբեր ամսվա համեմատ ներմուծված 1 լիտր բենզինի ձեռքբերման գները նվազել են 50 դրամով, որի հետևանքով մանրածախ վաճառքի գներն այդ չափով նվազել են, իսկ արդեն փետրվար ամսին՝ հունվար ամսվա համեմատ 1 լիտր բենզինի ձեռքբերման գները բարձրացել են շուրջ 50 դրամով, որի հետևանքով բենզինի մանրածախ վաճառքի գները բարձրացել են գրեթե 40 դրամով (տես՝ Գծանկար N 9):

Գծանկար N 9

Ներմուծող ընկերությունների կողմից մեկ լիտր բենզինի ձեռքբերման և իրացման գների դինամիկան 2016 հունվար-2017 փետրվար ժամանակահատվածում



Ըստ էության, գնային համադրելի փոփոխություններ եղել են նաև բենզինի միջազգային շուկաներում, իսկ ՀՀ-ում բենզինի ներմուծմամբ և իրացմամբ զբաղվող խոշոր ընկերությունների գործունեության ուսումնասիրության արդյունքում մրցակցային

օրենսդրության խախտումներ չեն բացահայտվել:

Հանձնաժողովը 2016 թվականին ուսումնասիրություն է իրականացրել նաև բազմաբնակարան շենքերի շինարարության ոլորտում, որի նպատակն է եղել գնահատել անշարժ գույքի շուկայում ձևավորված մրցակցային միջավայրը և զարգացման հեռանկարները: Ուսումնասիրությունն իրականացվել է 2011-2015 թվականների տվյալների հիման վրա և դիտարկվել են Երևանում բազմաբնակարան շենքերի շինարարություն իրականացնող ընկերությունների ցուցանիշները: Կատարված ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են բազմաբնակարան շենքերի շինարարության գործունեություն իրականացնող շուրջ 30 ընկերությունների տվյալներ և համաձայն ուսումնասիրության արդյունքների, բազմաբնակարան շենքերում բնակարանների իրացման շուկայում կենտրոնացվածության մակարդակը եղել է ցածր և գերիշխող դիրք ունեցող ընկերություններ չեն եղել (տես՝ Գծանկար N 11):

Գծանկար N 11

Բազմաբնակարան շենքերում բնակարանների իրացման շուկայի կառուցվածքը 2011-2015 թվականների տվյալներով



Ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովի կողմից դիտարկվել են նաև մի շարք այլ ցուցանիշներ, որոնք վերաբերում են շուկայի զարգացմանն ու ընդլայնմանը: Մասնավորապես, հաշվի առնելով էկոնոմ կարգի բնակարանների նկատմամբ մեծ պահանջարկը՝ դիտարկվել է նորակառույց շենքերում էկոնոմ կարգի բնակարանների մասնաբաժինը: Այս առումով հիմք են ընդունվել բնակարանների մակերեսները և մի շարք այլ ցուցանիշներ, իսկ կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել,

որ մեկ սենյականոց բնակարանների շուրջ 41 տոկոսն է համապատասխանում էկոնոմ դասի բնակարաններին ներկայացվող պահանջներին, երկու սենյականոց բնակարանների՝ շուրջ 24 տոկոսը, երեք սենյականոց բնակարանների՝ 10 տոկոսը և չորս, հինգ, վեց և ավելի սենյականոց բնակարանները չեն հանդիսացել էկոնոմ դասի բնակարաններ:

Բացի այդ, Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բնակարանների 1մ^2 մակերեսի գինը միջինում կազմել է շուրջ 282 հազար դրամ, ընդ որում 1մ^2 բնակտարածքի իրացման գինը ձևավորող բաղադրիչներից ամենախոշոր խումբը շինարարական աշխատանքներն են, որոնք կազմում են իրացման գնի գրեթե 60 տոկոսը: Ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ փոքր է եղել հիփոթեքային վարկերի միջոցով իրացված բնակարանների քանակը: Մասնավորապես, համաձայն կատարված հաշվարկների հիփոթեքային եղանակով իրացվել են նոր կառուցված բնակարանների ընդամենը՝ 10 տոկոսը:

Միաժամանակ, ուսումնասիրության արդյունքների համաձայն, տվյալ ժամանակահատվածում ընկերությունների կողմից կառուցապատված բնակելի շինություններում գերակշռել են երկու և երեք սենյականոց բնակարանները, որոնց տեսակարար կշիռը կազմել է 69 տոկոս, չորս սենյականոց բնակարանները՝ 15 տոկոս, մեկ սենյականոց՝ 8 տոկոս, հինգ սենյականոց՝ 2 տոկոս, իսկ բնակարանների 6 տոկոսի դեպքում վերջիններս շահագործման են հանձնվել առանց առանձնացված սենյակների, այսինքն բնակելի մակերեսի հետագա բաժանումը իրականացվել է իրացումից հետո (տես՝ Գծանկար N 12):

Գծանկար N 12

Բազմաբնակարան շենքերում 2011-2015 թվականների ընթացքում կառուցված բնակարանները ըստ սենյակների քանակի



Հանձնաժողովը 2016 թվականի ընթացքում ուսումնասիրություններ է իրականացրել նաև ցիտրուսային մրգերի (բանանի, նարնջի, կիվիի և կիտրոնի) ներմուծման և իրացման ոլորտում: Համաձայն կատարված ուսումնասիրության, թեև ներմուծման կառուցվածքում առկա են խոշոր ծավալներ ունեցող ընկերություններ, այդուհանդերձ նշված ապրանքատեսակներից յուրաքանչյուրի ներմուծման ոլորտում գործում են տասից ավելի տնտեսվարող սուբյեկտներ: Ընդ որում, նշված ցիտրուսային մրգերի ներմուծման վերաբերյալ կատարված հաշվարկների համաձայն՝ կենտրոնացվածությունը առավել բարձր է բանանի ներմուծման ոլորտում: Այդուհանդերձ, կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2016 թվականին բանանի ներմուծմամբ սկսել են զբաղվել նաև նոր տնտեսվարող սուբյեկտներ, որոնք ներմուծումներ են իրականացնում ԵԱՏՄ անդամ երկրներից:

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումներ

Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական մրցակցությունը պաշտպանելու և խրախուսելու, ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը նպաստելու տեսանկյունից առավել քան կարևոր է գերիշխող դիրքի չարաշահումների և հակամրցակցային համաձայնությունների բացահայտման, կանխման, ինչպես նաև վերոնշյալ դրսևորումների դեմ արդյունավետ և հետևողական պայքարելու ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացումը:

Հակամրցակցային համաձայնությունների առումով խնդրո առարկա են հանդիսանում տարբեր ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների այնպիսի գործողությունները կամ վարքագիծը, որոնք հանգեցնում են մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Ինչպես ցույց են տալիս համապատասխան միջազգային փորձը և այս ոլորտում նախկինում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ հակամրցակցային համաձայնությունների առումով առավել ռիսկային է համարվում պետական գնումների ոլորտը՝ տնտեսվարող սուբյեկտների միջև մրցույթների կամ աճուրդների պայմանների, դրանց արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման տեսանկյունից:

Հանձնաժողովը վերջին տարիներին զգալի աշխատանքներ է իրականացնում պետական գնումների ոլորտում առկա մրցակցային խնդիրները բացահայտելու նպատակով: Մասնավորապես 2016 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է ուսումնասիրությունները բժշկական, սոցիալական, կրթական և այլ ոլորտներում գործող տասնյակ պետական մարմինների, համայնքների կողմից կազմակերպված մրցույթների վերաբերյալ, որոնց արդյունքում բացահայտված երևույթները թեև մրցակցության օրենսդրության տեսանկյունից հակամրցակցային համաձայնություններ չեն հանդիսացել, այդուհանդերձ դրանք կարող են ազդել մրցույթներում ազատ և արդար մրցակցային միջավայրի ձևավորման վրա:

Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից բժշկական հաստատությունների (հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ և այլն) պետական գնումների մրցույթների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են հետևյալ խնդիրները.

1. Տարբեր բժշկական հաստատությունների կողմից համադրելի

ժամանակահատվածում միևնույն ապրանքները ձեռք են բերվել էականորեն տարբեր գներով, որը պայմանավորված է նրանով, որ հաստատությունները հաճախ մրցույթի ժամանակ չեն ունեցել հաստատված նախահաշվային գները և ինչպես բժշկական հաստատությունների, այնպես էլ այդ հաստատությունների վերադաս մարմինների կողմից հսկողություն չի իրականացվել ձեռքբերվող դեղերի գների նկատմամբ:

2. Հաստատությունների կողմից որոշ ծառայություններ ձեռք են բերվել ոչ մրցության եղանակով: Մասնավորապես, փոքր և միջին ծավալներ ունեցող բժշկական հաստատությունները, որոնք օբյեկտիվորեն իրենց հաստատության տարածքում չեն կարող բնակչությանը մատուցել անհրաժեշտ բոլոր տեսակի ծառայությունները, քանի որ չունեն նեղ մասնագիտացված մասնագետներ (սրտաբան, նյարդաբան, ակնաբույժ և այլն), այդ ծառայությունները ձեռք են բերել ոչ մրցութային եղանակով՝ խոշոր բժշկական հաստատություններից:

3. Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ եղել են դեպքեր, երբ մրցույթների հրավերներում բժշկական հաստատությունները նշել են կոնկրետ ապրանքային նշանի ապրանքներ, կամ էլ գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմել են այնպես, որ դրանց համապատասխանել են կոնկրետ ներմուծող կամ արտադրող ընկերության ապրանքները:

4. Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են նաև դեպքեր, որ բժշկական հաստատությունները հաղթող են ճանաչել մրցույթում բարձր գնային առաջարկ ներկայացրած ընկերությանը:

5. Ուսումնասիրությունները նաև ցույց են տվել, որ որոշ բժշկական հաստատություններ ապրանքները ձեռք են բերել հաստատված նախահաշվային գներից (տվյալ հաստատության բյուջեով այդ ապրանքի համար նախատեսված գումարից) բարձր գներով:

6. Պարզվել է նաև, որ որոշ մրցույթներում մրցակցություն չի եղել (մրցույթին մասնակցել և հաղթել է միայն մեկ ընկերություն)՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կան ապրանքներ, որոնք մատակարարվում են միայն մեկ ընկերության կողմից: Մասնավորապես խնդիրը հիմնականում վերաբերում է լաբորատոր փորձաքննության համար անհրաժեշտ նյութերի (թեսթերի) ձեռքբերմանը: Համաձայն ուսումնասիրության արդյունքների, բժշկական հաստատություններում առկա լաբորատոր փորձաքննության սարքավորումները (անալիզատորներ) աշխատում են միայն տվյալ ապրանքային նշանի նյութերով, ինչի արդյունքում բժշկական հաստատությունները չունեն այլ ապրանքային

նշանի նյութեր ձեռքբերելու այլընտրանք: Այս կապակցությամբ Հանձնաժողովի կողմից բացահայտվել է նաև մեխանիզմ, երբ բժշկական հաստատությանը լաբորատոր փորձաքննության սարքավորումները տրամադրվել են անվճար՝ հետագայում նշված հաստատությանը նյութերի ձեռքբերման հարցում դնելով կախվածության մեջ:

7. Համաձայն կատարված ուսումնասիրության արդյունքների մրցակցության սահմանափակումը դրսևորվել է նաև մրցութային հրավերներում ապրանքները կոնկրետ չափի տուփերով, պարկերով և այլ չափման միավորներով նշելու եղանակով: Այսպես, օրինակ, բժշկական հաստատությունը նշել է, որ ձեռքբերվող դեղի յուրաքանչյուր տուփում պետք է լինի 14 հաբ, մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ թեև առկա են նշված դեղ արտադրող և ներմուծող մի շարք տնտեսվարող սուբյեկտներ, այդուհանդերձ տուփերում 14 հաբի պարունակությամբ շուկայում առկա է միայն մեկ ապրանքային նշանով դեղ:

8. Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են նաև այլ խնդիրներ, որոնք վերաբերել են ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման իրականացման ծառայությունների մրցույթներին, ձեռքբերվող ապրանքների՝ գործող տեխնիկական կանոնակարգերին համապատասխանությանը և այլն:

Սոցիալական հաստատությունների կողմից իրականացված մրցույթների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կողմից բացահայտվել են հետևյալ խնդիրները.

1. Տարբեր սոցիալական հաստատությունների կողմից համադրելի ժամանակահատվածում միևնույն ապրանքները ձեռք են բերվել էականորեն տարբեր գներով, որը պայմանավորված է նրանով, որ հաստատությունները հաճախ մրցույթի ժամանակ չեն ունեցել հաստատված նախահաշվային գները և ինչպես սոցիալական հաստատությունների, այնպես էլ այդ հաստատությունների վերադաս մարմինների կողմից հսկողություն չի իրականացվել ձեռքբերվող ապրանքների գների նկատմամբ:

2. Մրցույթների հրավերներում առկա են եղել առևտրային նշաններին և ֆիրմային անվանումներին կատարված հղումներ, ինչի արդյունքում մրցույթներին հնարավորություն են ունեցել մասնակցել միայն այդ առևտրային նշաններով և ֆիրմային անվանումներով ապրանքների մատակարար ընկերությունները:

Ինչ վերաբերում է կրթական հաստատությունների և համայքների կողմից իրականացվող մրցույթներին, ապա ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են երկու խումբ խնդիրներ.

1. Գնումներն իրականացվել են ոչ մրցակցային եղանակով, որի արդյունքում պետական մարմինները մրցույթ իրականացնելու փոխարեն գնման առարկաները ձեռք բերելու նպատակով պայմանագրեր են կնքել առանձին տնտեսվարող սուբյեկտների հետ՝ դրանով իսկ սահմանափակելով այլ տնտեսվարող սուբյեկտների մասնակցությունը գնման գործընթացներին և սահմանափակելով մրցակցությունը:

2. Մրցույթների հրավերներում առկա են եղել առևտրային նշաններին և ֆիրմային անվանումներին կատարված հղումներ, ինչի արդյունքում մրցույթներին հնարավորություն են ունեցել մասնակցելու միայն այդ առևտրային նշաններով և ֆիրմային անվանումներով ապրանքների մատակարար ընկերությունները:

Բացի այդ, Հանձնաժողովի կողմից գնումների ոլորտում նախկինում հակամրցակցային համաձայնությունների և մրցակցությունը սահմանափակող երևույթների բացահայտման և կանխարգելման նպատակով իրականացվող ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են մի շարք խնդիրներ, որոնք Հանձնաժողովի հետևողականության շնորհիվ ներկայումս գտնվում են լուծման փուլում: Դրանք առնչվել են գնումների ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի անկատարությանը, գնման ընթացակարգերի վերաբերյալ ամբողջական և համակարգված տեղեկատվության բացակայությանը, էլեկտրոնային գնումների համակարգի արդյունավետության բարձրացմանը և դրա ներդրման շրջանակների ընդլայնմանը: Բացահայտված խնդիրների առնչությամբ Հանձնաժողովի կողմից իրավասու պետական մարմիններ են ներկայացվել օրենսդրական փոփոխություններ իրականացնելու և գնման գործընթացների կազմակերպման արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ: Դրանց արդյունքում ներկայումս.

1. էապես բարձրացել է www.gnumner.am կայքի և ARMEPS համակարգի գործառման արդյունավետությունը: Հնարավոր է դարձել բոլոր շահագրգիռ կողմերին իրականացված գնման գործընթացների վերաբերյալ մեկ պատուհանի սկզբունքով հասանելի դարձնել ամբողջական և համակարգված տեղեկատվություն՝ ըստ որոշակի չափանիշների (օրինակ՝ ըստ ոլորտների, ապրանքների խմբերի, պատվիրատուների և այլն):

2. Օրենքով լրամշակվել է «փոխկապակցված անձ» հասկացությունը և արգելվել է այնպիսի կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, որոնք գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

3. Ներդվել են մեխանիզմներ, որոնք ապահովում են գնումների բողոքարկման

գործընթացներում ներգրավված կամ շահագրգիռ կողմերի շահերի իրավաչափ պաշտպանությունը: Ձևավորվել է գնումների բողոքարկման խորհրդի հանձնաժողովների անդամների ընտրության և վարձատրության գործուն օրենսդրական մեխանիզմ՝ բարձրացնելով բողոքարկման խորհրդի անկախությունը:

Արտահանման ոլորտում մրցակցային խնդիրները բացահայտելու նպատակով Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություններ է իրականացրել արտահանող 60 խոշոր ընկերությունների շրջանում: Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ-ից արտահանման ծավալների մեծացման հարցում խոչընդոտ են հանդիսանում տրանսպորտային ուղիների սահմանափակ լինելը (24 տոկոս), ֆինանսական միջոցների բացակայությունը (23 տոկոս), վարկային միջոցների ներգրավման բարձր տոկոսադրույքները (16 տոկոս), բրենդի բավարար չափով ճանաչված չլինելը (16 տոկոս), ապրանքների բարձր գները (11 տոկոս) և այլն (տես՝ Գծանկար N 10):

Գծանկար N 10

Հայկական ապրանքների արտահանման համար խոչընդոտ հանդիսացող գործոնները՝ ըստ արտահանող ընկերությունների



Ինչ վերաբերում է դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման ծավալների մեծացմանը, ապա այս առումով նշված գործոններից բացի խոչընդոտում են նաև արժութային տատանումները, անուղղակի հարկերի հաշվարկմանը և վճարմանը վերաբերող որոշ ընթացակարգեր և այլն:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մրցակցության տեսակետից հիմնական խոչընդոտ է հանդիսանում այն հանգամանքը, որ մանրածախ առևտրի ցանցերը, հայկական ընկերությունների հետ ուղղակի աշխատելու փոխարեն, նախընտրում են ապրանքները ձեռք բերել տեղական միջնորդ (ռուսական դիստրիբյուտորներ) ընկերությունների միջոցով, որի պատճառով թանկանում են հայկական ապրանքների վերջնական գները (տես՝ Գծանկար N 11):

Գծանկար N 11

ԵԱՏՄ երկրներում հայկական ընկերությունների կողմից ապրանքների վաճառքի ուղին



Բացի այդ, համաձայն ուսումնասիրության, առևտրային ցանցերի կողմից մատակարար ընկերությունների համար սահմանվում են բարձր մուտքավճարներ, մատակարարներից գանձում են մարքեթինգային վճարներ, և, քանի որ նշվածը կարող է խոչընդոտել առևտրային ցանցերում հայկական ապրանքների վաճառքների ծավալների ընդլայնմանը և հանդիսանալ մուտքի խոչընդոտ՝ Հանձնաժողովը նշված հարցերը քննարկել է ԵԱՏՄ անդամ երկրների մրցակցային մարմինների հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵԱՏՄ անդամ երկրների շարքում առավել մեծ է դեպի ՌԴ արտահանումը, Հանձնաժողովի նախաձեռնությամբ և հրավերով ՌԴ-ից Հայաստան են ժամանել մանրածախ առևտրի ոլորտի առաջատար առևտրային ցանցերի ղեկավարներ, որոնք սպիրտային խմիչքներ, կաթնամթերք, հանքային ջրեր, գյուղատնտեսական

մթերքներ, հյութեր, պահածոներ և մի շարք այլ ապրանքներ արտադրող հայկական ընկերությունների հետ քննարկել են այդ խնդիրների լուծման մեխանիզմները: Հանդիպման արդյունքում հայկական ընկերությունների և ցանցերի միջև ձեռք են բերվել բազմաթիվ գործարար պայմանավորվածություններ և կնքվել նոր պայմանագրեր:

Հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից կազմակերպված քննարկումների ընթացքում արձանագրված արդյունքները, Հանձնաժողովն առաջարկել է ԵԱՏՄ և ԱՊՀ տարածքում առևտրային ցանցերի և մատակարար ընկերությունների համար մշակել բարեխիղճ վարքագծի կանոններ, որով հստակ կկանոնակարգվեն ապրանքի ձեռքբերումից մինչև իրացում և վճարում շղթան, ինչպես նաև կամրագրվեն մատակարարների և առևտրային ցանցերի միջև վեճերի առաջացման դեպքում լուծման մեխանիզմները:

Վերոնշյալի արդյունքում ԱՊՀ անդամ-պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի շրջանակներում ռուսական «Ակորտ» առևտրային ցանցերի ընկերությունների ասոցիացիայի հետ համատեղ մշակվել և հաստատվել է «Առևտրային ցանցերի և պարենային ապրանքների մատակարարների միջև բարեխիղճ փոխհարաբերությունների մասին» տիպային կանոնագիրքը, որին միանալու պարագայում մատակարար ընկերությունները «Ակորտ» առևտրային ցանցերի ընկերությունների ասոցիացիայի համար կդիտարկվեն որպես «կանխատեսելի գործընկերներ» և վերջինիս հետ փոխհարաբերություններում ձեռք կբերեն առավելություններ: Ներկայումս Հանձնաժողովը կատարում է աշխատանքներ հայկական արտահանող ընկերությունների կողմից կանոնագրքին միանալու ուղղությամբ:

Միջազգային համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի կողմից իրականացված ակտիվ աշխատանքի արդյունքում հնարավոր է դարձել ապահովել նաև հայկական ծխախոտի խոշորագույն արտադրող «Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ ընկերության արտադրանքի անարգել ներկայացվածությունը ՌԴ շուկայում: Մասնավորապես Հանձնաժողով է դիմել «Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ ընկերությունը հայտնելով, որ «Ֆիլիպ Մորիս Բրեդս Սարլ» ընկերությունը, համաձայնության գալով մի շարք խոշոր սուպերմարկետների հետ, փորձում է խոչընդոտել հայկական արտադրանքի իրացմանը՝ պնդելով, որ հայկական «Ararat» անվանումով ծխախոտը շփոթության աստիճանի նման է իրենց կողմից արտադրվող «Marlboro» ապրանքանիշի ծխախոտի հետ: Բացի այդ, նշված խնդրի կապակցությամբ «Ֆիլիպ Մորիս Բրեդս Սարլ» ընկերությունը ՌԴ-ում դիմել է դատարան՝ նպատակ

ունենալով նշված ծխախոտների շփոթության աստիճանի նմանությունն ամրագրել դատական ակտով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդիրն առաջացել է ՌԴ տարածքում, Հանձնաժողովի և ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության համագործակցության արդյունքում, ռուսաստանյան գործընկերները ևս ներգրավվել են խնդրի կարգավորման և հայկական արտադրողի շահերի պաշտպանության գործում: ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության և Հանձնաժողովի կողմից կատարվել են համատեղ ուսումնասիրություններ, որոնց արդյունքում ամրագրվել է, որ «Գրանդ Տոբակոն» օրենսդրական որևէ խախտում չի կատարել, գործել է բարեխիղճ և արդար մրցակցային կանոններով: Հանձնաժողովի նախաձեռնությամբ ՌԴ մրցակցային մարմինը ներգրավվել է նաև դատական գործընթացում և ներկայացրել Հանձնաժողովի հետ համատեղ կատարված ուսումնասիրության արդյունքում ձևավորված միասնական դիրքորոշումը: Արդյունքում, Մոսկվայի արբիտրաժային դատարանը ամբողջովին պաշտպանել է Հայաստանի և ՌԴ մրցակցային մարմինների դիրքորոշումը՝ մերժելով «Ֆիլիպ Մորիս Բրեդս Սարլ» ընկերության հայցը, դատական կարգով ամրագրելով, որ «Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ ընկերության գործողությունների մեջ որևէ հակամրցակցային տարր չկա. երկու ընկերությունների արտադրանքը չի կարող համարվել շփոթության աստիճան նման, քանի որ բոլոր հատկանիշներով դրանք միմյանցից էականորեն տարբեր են:

Գերիշխող դիրքի չարաշահումների և հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման և բացահայտման նպատակով 2016 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները կենտրոնացվածության բարձր աստիճան և (կամ) սոցիալական կարևոր նշանակություն ունեցող ապրանքային շուկաների նկատմամբ վերահսկողության ուղղությամբ՝ նպատակ ունենալով դրանցում ապահովել հավասար մրցակցային պայմաններ, նպաստել տնտեսվարող սուբյեկտների իրավունքների ու սպառողների շահերի պաշտպանությանը: Այսպես.

Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել «Գարեջուր» ապրանքային շուկայում, որի համար հիմք է հանդիսացել ապրանքային շուկայում գործող խոշոր ընկերությունների կողմից գնային բարձրացում իրականացնելը: Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված շուկայում կենտրոնացվածության աստիճանը բարձր է, և առկա են գերիշխող դիրք զբաղեցնող ընկերություններ («Երևան գարեջուր» ՓԲԸ և «Գյումրի գարեջուր» ՍՊԸ): Հետևապես Հանձնաժողովն իրականացվող ուսումնասիրության շրջանակներում փորձել է պարզել, թե որքանով են

գերիշխող դիրք զբաղեցնող ընկերությունների կողմից կատարված գնային փոփոխությունները համապատասխանում մրցակցության օրենսդրության դրույթներին: Կատարված գնային բարձրացումներն ընկերությունները պայմանավորել են ինքնարժեքը ձևավորող մի շարք ծախսերի ավելացմամբ և իրացման ծավալների կրճատմամբ: Հանձնաժողովը «Երևան գարեջուր» ՓԲ ընկերության մասով պարզել է, որ գների բարձրացմանը նախորդող ժամանակահատվածում արձանագրվել է ընկերության իրացման ծավալների որոշակի նվազում և որոշ ծախսային բաղադրիչների ավելացում, ինչի արդյունքում ընկերության եկամուտները նվազել են: Այդուհանդերձ կատարված հաշվարկները ցույց են տվել ընկերության կողմից իրացվող գարեջրի գները բարձրացվել են ավելի մեծ չափով, քան անհրաժեշտ էր պակաս ստացված եկամուտների մակարդակը վերականգնելու համար:

Ինչ վերաբերում է «Գյումրի գարեջուր» ՍՊ ընկերությանը, ապա Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ թեև կատարված գնային բարձրացումներն ուղեկցվել են ընկերության կողմից ձեռքբերվող որոշ ծառայությունների գծով ծախսերի ավելացմամբ, այդուհանդերձ նշված ծառայություններ մատուցող ընկերությունները «Գյումրի գարեջուր» ՍՊ ընկերության հետ ունեցել են փոխկապակցվածության հատկանիշներ, ինչից ելնելով Հանձնաժողովը դիմել է հարկային մարմիններին նշված ծախսերի արժանահավատությունը ստուգելու նպատակով:

Հաշվի առնելով այն, որ հեռահաղորդակցության ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների քանակը սահմանափակ է, և այդ ոլորտում բարձր է կենտրոնացվածության աստիճանը՝ Հանձնաժողովը, ԱՊՀ և ԵԱՏՄ անդամ-երկրներում «արդար ռոումինգի» համակարգի ներդրման ծրագրի շրջանակներում, 2016 թվականի ընթացքում շարունակել է միջազգային բջջային կապի (ռոումինգի) ծառայությունների մատուցման սակագների գծով ուսումնասիրությունները: Նշենք, որ համակարգի ներդրման գլխավոր նպատակն է ապահովել միջազգային բջջային կապի օպերատորների կողմից մատուցվող ծառայությունների սակագների հնարավորինս մոտեցումը տեղական բջջային ծառայությունների սակագներին: Իրականացված աշխատանքների արդյունքում ԵԱՏՄ անդամ-պետություններից դեպի ՀՀ կատարված զանգերի սակագները նվազեցվել են մինչև 8 անգամ: Այսպես, եթե նախկինում «Արմենտել», «ՎիվաՍել-ՄՏՍ» և «ՅուՔոմ» ընկերությունների բաժանորդները ԵԱՏՄ անդամ-երկրներից դեպի ՀՀ զանգեր կատարելու 1 րոպեի դիմաց միջինում վճարում էին

համապատասխանաբար 541 դրամ, 780 դրամ և 2150 դրամ, ապա ներկայումս սակագների նվազման արդյունքում բաժանորդները 1 րոպեի դիմաց վճարում են միջինում 250 դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում նաև շարունակվել է համագործակցությունն այլ պետական մարմինների կառուցվածքային ստորաբաժանումների հետ, քանի որ իրականացվող ուսումնասիրությունների արդյունքները փաստում են, որ շատ դեպքերում հավասար մրցակցությունը խաթարող գործոնները ծնող պատճառներն առնչվում են այլ պետական մարմինների իրավասություններին, նրանց կողմից ընդունվող իրավական ակտերին, տրամադրվող լիցենզիաներին և այլն: Այս ուղղությամբ 2016 թվականի ընթացքում մի շարք ոլորտներում իրականացվել են ուսումնասիրություններ: Չնայած այն հանգամանքին, որ այդ ոլորտի ապրանքային շուկաներում մրցակցային խնդիրներ չեն հայտնաբերվել, այնուամենայնիվ բացահայտված խնդիրները գտնվել են այլ պետական մարմինների իրավասությունների ներքո և իրենց ազդեցությունն են թողել մրցակցային միջավայրի վրա: Ուստի այդ ուսումնասիրությունների արդյունքները տրամադրվել են համապատասխան իրավասու մարմիններին՝ վերջիններիս իրավասությունների և լիազորությունների կարգավորման շրջանակներում գտնվող և տարբեր ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող խնդիրների կարգավորման նպատակով:

Այսպես, Հանձնաժողովն ուսումնասիրություններ է իրականացրել ազոտական պարարտանյութերի շրջանառության բնագավառում՝ մրցակցային միջավայրին առնչվող խնդիրների բացահայտման նպատակով: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ոլորտում գործում է պետական աջակցության ծրագիր և ազոտական պարարտանյութերի իրացման կառուցվածքում առավել խոշոր ծավալներ ունի նշված ծրագրի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին պարարտանյութեր ներմուծող և մատարարող «Մասիսի Բերրիություն» ՍՊ ընկերությունը (տես՝ Գծանկար N 12):

Գծանկար N 12

Ազոտական պարարտանյութի ներմուծման կառուցվածքը 2015 թվականին՝ ըստ ընկերությունների



Համաձայն ուսումնասիրության, նշված ծրագրի շրջանակներում «Մասիսի Բերրիություն» ՍՊ ընկերությունը վերջին մի քանի տարիների ընթացքում ստացել է բյուջետային վարկ, դրամաշնորհ և սուբսիդիա՝ գյուղացիական տնտեսություններին պարարտանյութերի մատակարարում իրականացնելու համար: Կատարված ուսումնասիրությունների համաձայն ընկերությունը պարարտանյութեր ներմուծում է Վրաստանի Հանրապետությունից, ինչը հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Վրաստանի Հանրապետությունից տարբեր երկրներ պարարտանյութերի արտահանման գները և պարզել, որ դրանք այլ երկրներ արտահանվող ազոտական պարարտանյութերի գների համեմատ եղել են ամենաբարձրը: Միաժամանակ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Վրաստանի Հանրապետությունից պարարտանյութերի ներմուծում իրականացնում է մեկ այլ ընկերություն ևս, որի կողմից ազոտական պարարտանյութերի գները համադրելի են եղել Վրաստանի Հանրապետությունից այլ երկրներ արտահանված ազոտական պարարտանյութերի արտահանման գների հետ և հետևապես եղել են ավելի ցածր, քան «Մասիսի Բերրիություն» ՍՊ ընկերության ձեռքբերման գներն են (տես՝ Աղյուսակ N 1):

Աղյուսակ N 1

Վրաստանից 2015 թվականին և 2016 թվականի հունվար-ապրիլ ամիսներին ազոտական պարարտանյութերի արտահանման ծավալները և գները՝ ըստ երկրների

Երկրի անվանումը	2015 թվական		2016 թվական	
	Արտահանման ծավալներ (կգ)	**Միջինը ինվոյսային արժեք (ԱՄՆ դոլար)**	**Արտահանման ծավալներ (կգ)**	**Միջինը ինվոյսային արժեք (ԱՄՆ դոլար)**
Հայաստան, որից	35 812 232	328	22 835 480	314
«Մասիսի Բերրիություն» ՍՊԸ	--	323	--	304
«Գրինպրոդուկտ» ՍՊԸ	--	249	--	269
Ֆրանսիան	21 794 500	250	--	--
ԱՄՆ	26 140 779	296	--	--
Բրազիլիա	28 790 853	222	--	--
Հնդկաստան	32 494 000	253	14 250 000	231
Լիտվան	30 000 000	211	--	--
Ռումինիա	45 596 000	219	12 000 000	227

Հանձնաժողովը կատարված ուսումնասիրությամբ պարզել է, որ պետական աջակցության ծրագրին մասնակցության համար շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունների համար չկան հստակ սահմանված չափորոշիչներ և ընթացակարգեր, ինչի արդյունքում «Մասիսի Բերրիություն» ՍՊ ընկերությունը, մասնակցելով պետական աջակցության ծրագրին, զգալի առավելություն է ստանում մրցակիցների նկատմամբ: Մյուս կողմից, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ազոտական պարարտանյութերի մատակարար ընկերության ընտրությունը մրցութային եղանակով կազմակերպումը կարող է հանգեցնել ոչ միայն նշված ապրանքատեսակի գների նվազմանը, այլ նաև պետական միջոցների զգալի տնտեսմանը:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը դիմել է պետական շահագրգիռ մարմիններին պետական աջակցության շրջանակներում մատակարար ընկերության ընտրությունը մրցութային եղանակներով իրականացնելու առաջարկությամբ:

Հանձնաժողովը տաքսի ծառայությունների ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների բողոքների հիման վրա ուսումնասիրություն է իրականացրել տաքսի ծառայությունների մատուցման ոլորտում: Կատարված ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը բացահայտել է երկու տեսակի խնդիր.

1. էլեկտրոնային հարթակների միջոցով տաքսի ծառայություններ մատուցող ընկերությունները առավելություն են ստանում այլ եղանակով (հեռախոսազանգերի միջոցով) տաքսի ծառայություն մատուցող ընկերությունների նկատմամբ, քանի որ վերջիններս ՀՀ օրենսդրության համաձայն լիցենզավորվում են, կատարում են արտոնագրային վճարներ, վարորդների համար վճարում են եկամտային հարկ: Մինչդեռ էլեկտրոնային հարթակների միջոցով ծառայություն մատուցող ընկերությունները նման վճարներ չեն կատարում: Նշված խնդրի կապակցությամբ ևս Հանձնաժողովը դիմել է շահագրգիռ պետական մարմնին՝ խնդրի կարգավորման նպատակով:

2. Բացի այդ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ էլեկտրոնային հարթակների միջոցով ծառայություններ մատուցող ընկերությունների շարքում ոչ ռեզիդենտ հանդիսացող «Yandex taxi» ընկերությունն իր վարքագծով խորացնում է շուկայում անհավասար մրցակցային պայմանները: Մասնավորապես «Yandex taxi» ընկերությունը էլեկտրոնային հավելվածի միջոցով պատվերներ է տրամադրում իր հետ համագործակցող ընկերություններին և, տրամադրված պատվերների դիմաց միջնորդավճարներ ստանալու փոխարեն, տարբեր ծառայությունների անվան ներքո, յուրաքանչյուր պատվերի համար ինքն է վճարում այդ ընկերություններին: Նման վարքագծի արդյունքում «Yandex taxi» ընկերության հետ համագործակցող տաքսի ծառայություններ մատուցող ընկերությունները կարողանում են առաջարկել շուկայականից էականորեն էժան գներ, որը կարող է հանգեցնել շուկայից մրցակիցների դուրս մղմանը: Վերը նշվածի արդյունքում Հանձնաժողովը «Yandex taxi» ընկերությանը տվել է զգուշացում:

Հանձնաժողովը տնտեսվարող սուբյեկտից ստացված դիմումի հիման վրա ուսումնասիրել է նաև բժշկական հաստատություններին պետական պատվերների շրջանակում ֆինանսավորման տրամադրմանը վերաբերող հարցերը: Մասնավորապես, դիմումատու ընկերությունը նշել է, որ պետական պատվերների շրջանակներում ֆինանսավորումը միմյանց մրցակից բժշկական հաստատությունների միջև պետության կողմից բաշխվում է անհամաչափորեն: Հանձնաժողովը կատարված ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ գործող մեխանիզմը, որի համաձայն պետության կողմից բժշկական հաստատությունների ֆինանսավորումը կատարվում է հիմնականում հաշվի առնելով նրանց կողմից նախկին տարիներին պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը, բժշկական հաստատությունների միջև չի ապահովում հավասար մրցակցային պայմաններ, չի նպաստում նրան, որ բժշկական

հաստատությունները կատարեն նոր ներդրումներ և մատուցեն ավելի բարձրորակ ծառայություններ: Վերը նշվածը հաշվի առնելով, միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովը դիմել է շահագրգիռ պետական մարմիններին՝ առաջարկելով պետական պատվերի շրջանակում ֆինանսավորումն իրականացնել հետվճարային սկզբունքով, որի համաձայն հիվանդն ինքը կընտրի բուժհաստատությունը, որտեղ կստանա իրեն անհրաժեշտ համապատասխան ծառայությունները, և դրանից հետո միայն տվյալ բժշկական հաստատությունը կֆինանսավորվի փաստացի մատուցած ծառայությունների դիմաց:

Մրցակցության պաշտպանության, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից կարևոր խնդիրներից է հանդիսանում անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտումը, կանխարգելումը և դադարեցումը:

Անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման ուղղությամբ Հանձնաժողովի կողմից կատարվող ուսումնասիրությունները փաստում են, որ ՀՀ-ում առավել հաճախ դրանք դրսևորվում են SMS հաղորդագրությունների, բուկլետների, վահանակների, պաստառների, ինտերնետային կայքերի միջոցով և զանգվածային լրատվական միջոցներով տարածվող գովազդներում:

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում մի շարք ընկերությունների գործողությունները որակվել են որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ: Այսպես, Հանձնաժողովի կողմից բացահայտված անբարեխիղճ մրցակցության դեպքերից ներկայացնենք հետևյալները.

Հանձնաժողովը ուսումնասիրություն է իրականացրել «Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Կազմակերպությունը դիմումում նշել է, որ բջջային հեռախոսների վաճառքով զբաղվող «Մոբայլ Սենթր Արթ» ՍՊ ընկերությունն իրականացնում է գովազդ, որի համաձայն ապառիկ եղանակով հեռախոսների ձեռքբերման դեպքում գործում է 0 տոկոս կանխավճար, 0 տոկոս տոկոսադրույք և նշել, որ հեռախոսներն ապառիկ եղանակով ձեռքբերման դեպքում գները մնում են անփոփոխ, սակայն իրականում բանկերի կողմից գանձվում են լրացուցիչ վճարներ: Այս կապակցությամբ Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ընկերությունը առավել մեծ թվով սպառողներ ներգրավելու նպատակով գովազդի շրջանակներում ներկայացրել է ակցիային վերաբերող միայն դրական կողմերը: Մասնավորապես, ընկերությունը չի

ներկայացրել այնպիսի կարևոր տեղեկատվություն, ինչպիսին է ապառիկ եղանակով հեռախոսների ձեռքբերման դեպքում բանկերի կողմից գանձվող ամսական միջնորդավճարը, ինչը հանգեցնում է ապրանքի գնի թանկացմանը և կարևոր տեղեկատվություն կարող է լինել սպառողների ընտրության հարցում:

Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել «Վեգա» ապրանքային նշանի ներքո գործող խանութների կողմից հայտարարված ակցիայի վերաբերյալ: Այսպես, «Վեգա Ուորլդ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ «Վեգա Ուորլդ» ընկերություն) սպառողներին ուղարկել է SMS հաղորդագրություններ, որոնց համաձայն «Վեգա» ապրանքային նշանի ներքո գործող խանութներում էլեկտրատեխնիկայի ամբողջ տեսականին վաճառվում է ինքնարժեքով: Այս կապակցությամբ Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «Վեգա Ուորլդ» ընկերությունը, սպառողներին մոլորեցնելով, էլեկտրատեխնիկայի տարբեր տեսակներ իրացրել է ինքնարժեքից բարձր գներով:

Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև Էկելտրատեխնիկայի վաճառքով զբաղվող «Էլմարկետ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ «Էլմարկետ» ընկերություն) կողմից հայտարարված գովազդը (գործում է «Էլեկտրոնիքս պլանետ» ապրանքային նշանի ներքո): Ընկերությունը ինտերնետային և հեռուստատեսային գովազդի միջոցով տարածել է տեղեկատվություն, որի համաձայն «Էլեկտրոնիքս պլանետ» ապրանքային նշանի ներքո գործող խանութներում իրականացնում է ակցիա մինչև 50 տոկոս զեղչի տեսքով, ինչպես նաև գնորդներին նվիրում է ոսկյա ձուլակտորներ: Հանձնաժողովը կատարված ուսումնասիրությամբ պարզել է, որ «Էլմարկետ» ընկերությունը ոսկյա ձուլակտորներ նվիրում է ոչ բոլոր գնորդներին, այլ միայն նրանց, ում գնումները գերազանցում են 300 000 դրամի շեմը:

Հանձնաժողովը անբարեխիղճ մրցակցության գործողություն է արձանագրել նաև Էկելտրատեխնիկայի վաճառքով զբաղվող «Արայ» ՍՊ ընկերության կողմից հայտարարված գովազդում: Մասնավորապես, ընկերությունը իրականացվող ակցիայի վերաբերյալ սպառողների շրջանում տարածել է տեղեկատվություն, որի համաձայն ի թիվս այլ պայմանների նշել է, որ ակցիայի շրջանակներում ապառիկը տրամադրվում է 0 տոկոս կանխավճարով և 0 տոկոս տարեկան տոկոսադրույքով: Սակայն ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ակցիայի շրջանակում ապառիկով ձեռքբերվող ապրանքների համար սպառողները ստիպված են վճարել միջնորդավճար՝ տրամադրված գումարի ամսական 0.7 տոկոսի չափով:

Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև ժամացույցների վաճառքով զբաղվող «Թայմլես» ՍՊ ընկերության (այսուհետ՝ «Թայմլես» ընկերություն) կողմից հայտարարված գովազդը (գործում է «Թայմ» ապրանքային նշանի ներքո): Ընկերությունը SMS հաղորդագրության միջոցով տարածել է տեղեկատվություն, որի համաձայն «Թայմ» ապրանքային նշանի ներքո գործող խանութներում իրականացնում է ակցիա, որի շրջանակներում մեկ ժամացույց գնելու դեպքում գնորդը ստանում է իրավունք երկրորդ ժամացույցը ձեռք բերել 50 տոկոս զեղչով: Հանձնաժողովը կատարված ուսումնասիրությամբ պարզել է, որ «Թայմլես» ընկերության կողմից կիրառվող ակցիայի շրջանակներում գործում է լրացուցիչ պայման, որի համաձայն զեղչվող երկրորդ ժամացույցի գինը պետք է լինի ոչ ավելի, քան գնված առաջին ժամացույցի գինը:

Հանձնաժողովն ուսումնասիրություններ է իրականացրել նաև գազավորված (կարբոնացված), քաղցրացված ըմպելիքների շուկայում՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորումները բացահայտելու նպատակով: Կատարված դիտանցումների արդյունքում բացահայտվել են տնտեսվարող սուբյեկտներ, որոնք իրենց կողմից արտադրված կամ ներմուծված ըմպելիքների պիտակների վրա նշել են, որ դրանք պարունակում են տարբեր տեսակի մրգեր, սակայն ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ նշված ըմպելիքները պարունակում են ընդամենը նույն մրգերի համային հավելումներ:

Հաձնաժողովը ուսումնասիրություն է իրականացրել նաև «Սպառողների ասոցիացիա Հ/Կ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Մասնավորապես խնդիրը կայացել է նրանում, որ քաղաքացին ՌԴ-ից ձեռքբերել և ՀՀ է ներմուծել Ֆորդ ապրանքանիշի ավտոմենքենա, որը թեև ենթակա է եղել երաշխիքային սպասարկման 3 տարվա ընթացքում, այդուհանդերձ ՀՀ-ում Ֆորդ ընկերության պաշտոնական դիլերը («Ֆորա» ՍՊ ընկերություն) հրաժարվել է իրականացնել երաշխիքային սպասարկումը՝ նշելով, որ իրականացնում է միայն իր կողմից վաճառված ավտոմեքենաների երաշխիքային սպասարկումը: Հանձնաժողովն ուսումնասիրությամբ պարզել է, որ «Ֆորա» ՍՊ ընկերությունն իր ինտերնետային կայքում տարածել է հաղորդագրություն, որի համաձայն Ֆորդ ընկերության պաշտոնական դիլերներից ձեռքբերված ավտոմեքենաները ենթակա են երաշխիքային սպասարկման, սակայն, ըստ էության, հրաժարվել է իրականացնել Ֆորդ ընկերության այլ դիլերից ձեռքբերված ավտոմեքենայի անվճար երաշխիքային սպասարկումը:

Հանձնաժողովը հաշվետու տարվա ընթացքում բացահայտել է նաև

հասարակության մոլորեցման՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորման մի շարք դեպքեր, որոնք կապված են ապրանքի բնութագրերի չհիշատակելու և մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման իրավունքի խախտումների հետ:

Հանձնաժողովը 2016 թվականի ընթացքում շարունակել է ուսումնասիրությունները համակենտրոնացումների, այդ թվում՝ չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման ուղղությամբ, որի նպատակն է թույլ չտալ նույն կամ միմյանց հետ փոխկապակցված ոլորտներում գործող տարբեր ընկերությունների՝ միավորումների միջոցով օրենսդրությամբ արգելված խոշորացումը և գերիշխող դիրքի ամրապնդումը: Հանձնաժողովի կողմից 2016 թվականի ընթացքում պատասխանատվության են ենթարկվել թվով 18 տնտեսվարող սուբյեկտներ, որոնք սահմանված կարգով չեն հայտարարագրել համակենտրոնացումները:

Միաժամանակ Հանձնաժողովը շարունակել է տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա համակենտրոնացման դեպքերի ուսումնասիրությունը: Այս առումով նշված ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից կայացվել են համակենտրոնացումների թույլտվության 45, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներին անձանց խումբ համարելու 14 որոշումներ:

Տնտեսական մրցակցության միջավայրի կարգավորման և վերահսկման տեսանկյունից կարևորվում են նաև Հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքները՝ կապված դատական մարմիններում բողոքարկված որոշումների պաշտպանության հետ: Այդ կապակցությամբ 2016 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է իրականացնել դատական ներկայացուցչություն՝ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների դատական կարգով բողոքարկման արդյունքում իրականացված դատական վարույթներով: Մասնավորապես, 2016 թվականի ընթացքում ավարտվել են Հանձնաժողովի՝ նախկինում բողոքարկված որոշումների թվով 6 դատական վարույթներ, որոնց արդյունքում դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռներով և որոշումներով Հանձնաժողովի բողոքարկված որոշումները թողնվել են անփոփոխ: 2016 թվականի ընթացքում բողոքարկվել է Հանձնաժողովի թվով 13 որոշում, որոնցից 3-ը մնացել են անփոփոխ, իսկ մնացած գործերով դատական քննությունը շարունակվում է:

3.1 Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծությունը

Մրցակցային միջավայրի բարելավմանն ուղղված առաջարկների շրջանակներում կարևորվում է օրենսդրական փոփոխությունների իրականացումը: Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության կապակցությամբ ՀՀ-ում գործող իրավական ակտերը ԵԱՏՄ-ում գործող իրավական ակտերին համապատասխանեցնելու գործընթացի շրջանակներում Հանձնաժողովի կողմից շարունակվել են 2015 թվականին մշակված ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի քննարկման, լրամշակման աշխատանքները, որոնց արդյունքում խմբագրված նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով հետագա քննարկման նպատակով:

Համակենտրոնացումների նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով Հանձնաժողովի կողմից իրականացվել են փոփոխություններ և լրացումներ համապատասխան իրավական ակտում: Մասնավորապես, համակենտրոնացումների նկատմամբ հսկողությունն առավել թիրախային դարձնելու նպատակով Հանձնաժողովի կողմից շուրջ երեք անգամ բարձրացվել են համակենտրոնացման մասնակից ընկերությունների ակտիվների և հասույթների շեմերը: Միևնույն ժամանակ համակենտրոնացման գործարքների համակողմանի և ընդգրկուն ուսումնասիրության, ինչպես նաև համակենտրոնացման գործարքների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ստացման համար Հանձնաժողովի կողմից լրամշակվել է համակենտրոնացման հայտարարագրի ձևը:

Մրցակցային իրավիճակի բարելավման նպատակով Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացրել սպառողների և բիզնեսի շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով տարբեր լրատվամիջոցների, ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով պարբերաբար հրապարակվել են տեղեկատվական-

քարոզչական հաղորդումներ, ինչպես նաև տպագրվել և տարածվել են տեղեկատվական նյութեր:

Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված աշխատանքների շրջանակներում 2016 թվականին պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ գործարար համայնքը ներկայացնող կազմակերպությունների, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների և ոլորտային տարբեր մարմինների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են մրցակցության ոլորտին առնչվող խնդրահարույց հարցեր: Այս առումով, կարևորվում են մասնակիցների առաջարկները, որոնց հիման վրա Հանձնաժողովը վերանայում է իր աշխատանքային գործունեության ուղղությունները և դրանք դարձնում առավել նպատակային ու արդյունավետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրներին, այդ թվում՝ գերիշխող դիրքի չարաշահման երևույթների բացահայտմանը, հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերմանը և անբարեխիղճ մրցակցության գործողությունների կանխարգելմանը, մուտքի խոչընդոտների բացահայտմանը, համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության ուժեղացմանն առնչվող հարցեր:

Հաշվի առնելով օտարերկրյա ներդրումների կարևորությունը տնտեսության զարգացման գործում՝ Հանձնաժողովի կողմից կազմակերպվել է հանդիպում նաև ՀՀ-ում գործող եվրոպական կապիտալով ընկերությունների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են գործարարության զարգացմանը խոչընդոտող խնդիրները, որոնք համաձայն հանդիպմանը մասնակցող ընկերությունների հիմնականում վերաբերում են տարբեր պետական մարմինների կողմից իրականացվող անհավասար վարչարարությանը, դատական համակարգին, պետական գնումների ընթացակարգերի խախտումներին և մրցույթների ցածր թափանցիկությանը:

Մրցակցային միջավայրի բարելավման ուղղությամբ կարևորվում է նաև Հանձնաժողովի կողմից տարբեր ոլորտներում և ապրանքային շուկաներում կատարվող ուսումնասիրությունները, որոնք նպատակ ունեն պարզելու առկա մրցակցային իրավիճակը, դրանցում գործունեության իրականացման հնարավոր խոչընդոտները, իրացման ծավալների վրա ազդող գործոնները և այլն: Նշված ուղղությամբ հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովն իրականացրել է նպարեղենի և մսամթերքի ոլորտների ուսումնասիրություններ:

Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ

մրցակցային խնդիրները կապված են նաև այլ պետական մարմինների գործունեության հետ: Ուստի ակնհայտ է, որ Հանձնաժողովն ի վիճակի չէ միայնակ պայքարելու առկա մրցակցային խնդիրների լուծման ուղղությամբ և անհրաժեշտ են բոլոր իրավասու պետական մարմինների ակտիվ և համակողմանի գործողությունները՝ մրցակցային իրավիճակի բարելավման նպատակով: Այդ իսկ պատճառով, Հանձնաժողովի կողմից բացահայտված այն բոլոր խնդիրները, որոնք բացասաբար են անդրադարձել մրցակցային միջավայրի վրա, սակայն գտնվել են Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից դուրս, Հանձնաժողովը նշված խնդիրների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքները տրամադրել է համապատասխան պետական մարմիններին:

Գլուխ 4. Հանձնաժողովի 2016 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն

Հանձնաժողովի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Հայաստանի Հանրապետության 2016 թվականի բյուջեով՝ որպես Հանձնաժողովի աշխատակազմի պահպանման ծախս, նախատեսվել է 317.802,20 հազար ՀՀ դրամ, ծախսվել է 314.175,74 հազար ՀՀ դրամ, բյուջե է վերադարձվել 3.626,46 հազար ՀՀ դրամ:

Հանձնաժողովի տարեկան ծախսերը

(Հազար դրամ)

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի ***Անվանումը***	***Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ***	***Դրամարկղային ծախս***
Հաստիքային միավորների թիվ	*76*	*76*
Ծառայողական ավտոմեքենաների քանակ	*5*	*5*
Ընթացիկ ծախսեր	*317.802,20*	*314.175,74*
– *Աշխատողների աշխատավարձեր և այլ հավելավճարներ*	*266.640,80*	*266.640,80*
– *Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում*	*14.528,40*	*14.528,40*
– *Էներգետիկ ծառայություններ*	*6.171,10*	*5.136,45*
– *Կոմունալ ծառայություններ*	*130,50*	*57,72*
– *Կապի ծառայություններ*	*6.436,30*	*5.429,37*
– *Ապահովագրական ծախսեր*	*200,00*	*200,00*
– *Տեղեկատվական ծառայություններ*	*827,80*	*824,10*
– *Ներքին գործուղումներ*	*3.500,00*	*3.500,00*
– *Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր*	*4.317,20*	*4.317,20*
– *Համակարգիչների ծրագրայի ծառայություններ*	*200,00*	*35,00*
– *Ներկայացուցչական ծախսեր*	*500,00*	*494,49*
– *Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ*	*2.032,00*	*1.852,00*
– *Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում*	*2.826,00*	*2.716,00*
– *Գրասենյակային նյութեր և հագուստ*	*1.420.70*	*913,63*
– *Տրանսպորտային նյութեր*	*4.745,00*	*4.668,64*
– *Կենցաղային և հանրային սննդի նյութեր*	*152,00*	*157,70*
– *Հատուկ նպատակային այլ նյութեր*	*2.000.00*	*2.000,00*
– *Այլ հարկեր*	*174,00*	*50,25*
– *Վարչական սարքավորումներ*	*1.000,00*	*660*

Հավելված

Աղյուսակ

Համաշխարհային մրցունակության
զեկույցում Հայաստանի և մի շարք երկրների մրցակցային միջավայրին
առնչվող ցուցանիշների վերաբերյալ

Երկիր	Դիրք										
	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016

Շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների ազդեցությունը մրցակցության վրա

+82

Հայաստան	*121*	*131*	*133*	*129*	*133*	*133*	*90*	*75*	*93*	*79*	*51*
Ռուսաստան	86	78	79	92	88	101	107	93	75	69	59
Ղազախստան	67	81	89	87	91	93	83	78	68	57	69
Վրաստան	101	108	95	98	113	112	121	119	103	88	76
Մոլդովա	-	-	-	-	102	111	130	133	125	124	127
ՈՒկրաինա	79	95	75	91	128	129	108	132	129	98	99

Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը

+61

Հայաստան	*114*	*130*	*132*	*132*	*138*	*138*	*116*	*97*	*105*	*88*	*77*
Ռուսաստան	96	106	95	107	108	111	124	116	102	83	82
Ղազախստան	72	81	90	92	113	121	95	91	94	68	83
Վրաստան	82	94	111	125	135	135	141	138	127	116	114
Մոլդովա	-	-	-	-	119	123	130	133	133	135	134
ՈՒկրաինա	84	98	96	111	126	136	132	137	136	136	136

Երկիր	Դիրք										
	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016

Տեղական մրցակցության ուժգնությունը



Հայաստան	*112*	*124*	*132*	*128*	*136*	*139*	*130*	*102*	*85*	*85*	*91*
Ռուսաստան	68	92	108	106	115	124	124	113	74	77	81
Ղազախստան	74	74	97	101	109	117	113	120	111	94	106
Վրաստան	92	115	114	115	124	128	127	123	105	91	78
Մոլդովա	-	-	-	-	101	104	108	119	99	103	114
Ուկրաինա	78	93	105	111	118	120	104	106	101	99	108